ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ՀԲՄԱՊՁԲ-25/02»

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՀԲՄԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 03-ի թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձյան որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա է հանդիսանում՝ Համակարգիչ ամբողջը մեկում .

Հ/Հ	**Մասնակցի անվանումը**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	**Անհամապատասխանության համառոտ նկարագրույթուն**
1	«Էլմարկետ» ՍՊԸ	X		
2	Ա/Ձ Մովսես Շահվերդյան		X	Ա/Ձ Մովսես Շահվերդյանը սահմանված ժամկետում չի շտկել իր կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները: Ա/Ձ Մովսես Շահվերդյանի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:
3	«Հպարտ քաղաքացի» ՍՊԸ	X		
4	Clickamber Limited		X	Clickamber Limited-ի կողմից ներկայացված հայտում ներառված գնային առաջարկը (հավելված N 2) կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան,

				մասնավորապես հիշյալ հավելվածի աղյուսակում մասնակցի կողմից լրացման ենթակա տվյալները լրացված չեն հայերեն լեզվով (լրացված են անգլերեն): Ելնելով վերոշարադրյալից՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով Ընթացակարգի հայտարարության 7-րդ պարբերությունը, «ԴԴ-ՀԲՄԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 1.3 կետը, www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Հաճախ ստացվող հարցադրումների վերաբերյալ տրամադրված պարզաբանումներ» բաժնում հրապարակված «ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻՑ ՀԱՃԱԽԱԿԻ ՍՏԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» փաստաթղթի 24-րդ կետով տրված պարզաբանումը՝ Clickamber Limited-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի:
5	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել “X”/	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/**
1	«Հպարտ քաղաքացի» ՍՊԸ	X	114 000 000
2	«Էլմարկետ» ՍՊԸ		162 400 000
3	«Էյչ Գրուպ» ՍՊԸ		247 500 000

-	Clickamber Limited		164 034 282
-	Ա/Ձ Մովսես Շահվերդյան		70 000 000

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ՀԲՄԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիամ Հայրապետյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

Հեռախոս՝ **010-511-783**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@court.am:**

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ:**